

Երկրի ղեկավարականութիւնը նուազ էր: Ռուսիա իր միջինասիական կալուածքը դրաւած է մօտաւորապէս 1000 մեռեալ եւ 3000 վիրաւորով: Գլխաւոր ղեկավարութիւնը Անգլիոյ կողմէն եղաւ, որ Հնդկաստանի սիրոյն ի դործ դրաւ իր ամբողջ արուեստը:

Կովկասն է, որ, իր բոլոր նուաճումներուն մէջ, ամենէն աւելի արիւն արժած է Ռուսաստանին: Գիւլիք Քայնարջայի դաշնագրէն (1774) մինչեւ Բեռլինի դաշնագիր (1878) շրջանը, ամբողջ դար մը հարկ եղաւ՝ Թուրքերէն Կովկասի արեւմտեան կէսը կորցելու համար:

Արեւելեան կէսը, որ Պարսկաստանի կը պատկանէր, աւելի շուտ աւար ինկաւ Ռուսիոյ: ԺԸ դարու վերջը Ռուսաստան, Պօղոս Ա. ի օրով, Պարսկաստանի տեղ հաստատուեցաւ Վրաստանի մէջ իրբեւ պաշտպան պետութիւն: 1801ին իրեն կցեց երկիրը. Գիւլիստանի (1813) եւ Թիւրքմէնջայի (1828) դաշնագրերով ան կը լրացնէր պարսկական Կովկասի նուաճումը:

**ՄԻԱՅԵԱԼ ԵՒ ԱՆԿԱՆ ԹՈՒՐԱՆԻԱՅԻ ԻԴԷԱԼԸ**

Համաշխարհային պատերազմի սկիզբը Ռուս կառավարութիւնը, սիրաշահելու համար հպատակ բազմախիտոն ալլազգի ժողովուրդները, որոնց հաւատարմութեան պէտք ունէր սեւէ ատենէ աւելի, խոստացաւ անոնց պատերազմի յաղթական վերջաւորութենէն ետք շնորհել ազգային վարչական կարգ մը իրաւունքներ: Իսկ անմիջապէս, որպէս կանխիկ գրաւական իր բարի կամեցողութեան, անոնց տուաւ դործելու որոշ ազատութիւններ, ինչպէս պատերազմի օժանդակ ազգային կազմակերպութիւններ ստեղծելու թոյլտուութիւն, եւն.: Թուրանականներն ալ փութացին օգտուել փոխուած պայմաններէն եւ կազմակերպուել ազգայնօրէն:

Ռուսաստանի միայն եւրոպական մասի թաթարները ենթարկուած էին զինուորագրութեան, իսկ Ասիոյ Թուրանական ժողովուրդները զերծ կացուցուած էին այդ պարտականութենէն. հասկանալի քաղաքական նկատումներով Ռուս կառավարութիւնը չէր համարձակեր զէնք տալ անոնց ձեռքը: Կովկասցիներն ու Թիւրքմէնները ազատ էին կամաւորական

խումբեր կազմելու, որոնք, հարկաւ, հաշուի առնելիք ոյժ մը չէին ներկայացնէր:

Ահա՛ թէ ինչպէս Թուրանական ժողովուրդները խաղաղութեամբ ապրեցան Ռուսաստանի մէջ մինչեւ 1916: Բայց երբ այս թուին ուխազ մը հրամայեց Թիւրքիստանի եւ Քըրզըզիսթանի բնակչութեան զօրաշարժը, որուն նպատակն էր լեցնել քանուորական վաշտերը, առաջ եկան արիւնայի ապստամբութիւններ, զորս Ջօր. Քուրոփաթըին ճնշեց մեծ դժուարութեամբ: (Տե՛ս H. Altdorffer, "Die Islamischen Voelker Russlands". Der Neue Orient, Band V. Heft 3-4, Berlin).

Նոյն տարին (Յունիս 1916) Լօզանի մէջ կը դումարուէր «Ռուսաստանի Ալլազգի ժողովուրդներու Լիգ»ի համագումարը, որ աւելի ծանօթ է «Անջատողական Մահմետականներու Բօնգրէ» անունով: Այս Բօնգրէն նախադահ Ռելիքընի կ'ուղղէր կոչ մը, ստորագրուած Քաղի Արդիւրբաշիդ Իբրահիմի, Ալա Օղլու Ահմէդի, Աքշուբա Օղլու Եուսուֆի եւ Հիւսէյին Ջաղէ Ալիի կողմէ: Կոչը, յանուն Ռուսաստանի քանըհինգ միլիոն ճնշուած մահմետականներուն (թաթարներ, Բաշքըրներ, Քըրզըղներ, Սարթեր, Թաջիկներ, Թիւրքմէններ եւ Կովկասեան լեռնականներ) կ'աղերսէր, որ օգնութեան հասնին եւ զիրենք ազատեն ռուսական բռնակալութենէն:

Այս համագումարին մէջ Քըրզըզ թաթարները կը պահանջէին ազգային ու կրօնական ինքնավարութիւն: Ջրաղթայ թաթարները միեւնոյն բազմանքը կ'արտայայտէին եւ կը պահանջէին Բուխարայի եւ Խիվայի խանութիւններուն անկախութիւնը: Ամէնքը միաձայն կը յայտնէին բազմամի միանալու եղբայրակից Թուրքիային, դաշնակցային կապերով: (Տե՛ս "L'Islam et la Politique des Allies", Dr. Enrico Insabats, Paris, 1920 p. 220):

1916ին էր նոյնպէս, որ Ռուսիոյ Պետական Դումայի մահմետական անդամներու նախաձեռնութեամբ ու մասնակցութեամբ Փեթերբուրգի մէջ կազմուեցաւ «Ռուսաստանի Մահմետականներու Կեդրոնական Բիւրօն» (Նախագահ՝ Յալիկով):

«Մահմետական Բիւրօն»-ի, ուր ներկայացուցիչ ունէին բոլոր մահմետական ժողովուրդները